ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

N 2004-Ա "21" օգոստոսի 2025թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծածկագիրը | չափաբաժնի համարը | գնման առարկայի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2025/36Շ | ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2025/36Շ | 1 | Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ21+500-ում գտնվող փլուզված հողային պաստառի շեպի վերականգնման աշխատանքներ | 19943777 | 17960000 | «ԱՆԴ ՇԻՆ ՍՏՐՈՅ» ՍՊԸ | 02325723 | ՀՀ, ք. Երևան, Մարկվանտի փողոց 69 տուն | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 11.08.2025թ. | Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»: ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, | ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն իրականացրել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2025/36Շ» ծածկագրով գնման ընթացակարգի մշտադիտարկում: Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՆԴ ՇԻՆ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն: Վերոնշյալ մշտադիտարկման ընթացքում ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը պարզել է, որ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի համաձայն՝ Ընկերության հիմնադիր և տնօրեն է հանդիսանում Սերյոժա Սպարտակի Ստեփանյանը: Պետական վերահսկողական ծառայության կողմից 24.07.2025 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ուղարկվել թիվ Ե/1605-25 գրությունը, համաձայն որի «ԱՆԴ ՇԻՆ ՍՏՐՈՅ» ՍՊ ընկերության և «ՍՍՍ Շին Գրուպ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն՝ Ընկերության հիմնադիր և տնօրեն են հանդիսանում Սերյոժա Սպարտակի Ստեփանյանի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Համաձայն Կարգի 119-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝ ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները, բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն [illegible] | «ՍՍՍ Շին Գրուպ» ՍՊ ընկերության հիմնադիրն է հանդիսանում՝ Վերգինե Սերյոժայի Ստեփանյանը, իսկ տնօրեն՝ Լիլիթ Սերյոժայի Ստեփանյանը: ՀՀ ֆինանսների նախարարության www.procurement.am hասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ «ՍՍՍ Շին Գրուպ» ՍՊ ընկերությունը 2023 թվականի հունիսի 20-ից մինչև 2025 թվականի հունիսի 20-ը ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վերոնշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովին հասանելի ՀՀ ֆինանսների նախարարության www.procurement.am hասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակված տեղեկատվության համաձայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Կապալառուն ներառված չի եղել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցանկում և «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց» ցուցակում : Հիմք ընդունելով այն, որ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ Պետական վերահսկողական ծառայության կողմից վերահսկողության արդյունքում արձանագրվել է, որ «ԱՆԴ ՇԻՆ ՏՏՐՈՅ» ՍՊ ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, և ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի և Պայմանագրի 8.3 կետի դրույթներով՝ [illegible] 11.08.2025թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն, գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ, դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից: Կարգի 120-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 119-րդ կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, որոք կամ | ՀԲՄԱՇՁԲ-2025/36Շ» ծածկագրով Պայմանագիրը: «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին: Վերոգրյալի մասին նշվել է Կատարողին 11.08. 2025թ. ներկայացված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2025/36Շ» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի լուծման N Աե//27132-2025 ծանուցման մեջ: Սակայն վերջինիս կողմից 21.08.2025թ. դրությամբ N «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2025/36Շ» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումների վճարումները հավաստող փաստաթղթեր չեն ներկայացվել: |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | եղբոր ամուսինն ու երեխաները «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը: | |

8/21/2025

X

ԱՐԹՈՒՐ ԱԶԱՏՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: AZATYAN ARTUR 3503710396 / Ա. ԵՐԻՑՅԱՆ

ք. Երևան